

«Գրանցված է»  
ՀՀ արդարադատության  
նախարարության կողմից  
18 սեպտեմբերի 2010 թ.  
Պետական գրանցման թիվ 10210347

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

9 սեպտեմբերի 2010 թ.  
ք. Երևան

N 186-Ն

## Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ  
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ, ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ  
ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ԿԱՐԳԸ  
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքի 51.15-րդ հոդվածի 8-րդ մասով.

### *Հրամայում եմ՝*

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության  
քրեակատարողական ծառայության քաղաքացիական ծառայողների վերապատրաստման կարգը՝  
համաձայն թիվ 1 հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության  
քրեակատարողական ծառայության քաղաքացիական ծառայողների մասնագիտական  
գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործման նպատակով  
գործուղելու կարգը՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող  
տասներորդ օրը:

**Գ. Դանիելյան**

Հավելված թիվ 1  
Հայաստանի Հանրապետության  
արդարադատության նախարարի  
2010 թվականի սեպտեմբերի 9-ի  
N 186-Ն հրամանի

Կ Ա Ր Գ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ  
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ**

**I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական ծառայողների (այսուհետ՝ քաղաքացիական ծառայողներ) վերապատրաստման հետ կապված հարաբերությունները:

2. Քաղաքացիական ծառայողների վերապատրաստումը նրանց մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների հետևողական կատարելագործումն է: Վերապատրաստման ժամկետը չի կարող պակաս լինել 60 ակադեմիական ժամից:

*(2-րդ կետը խմբ. 19.12.11 N 216-Ն)*

3. Քաղաքացիական ծառայողների վերապատրաստման գործընթացի կազմակերպման պատասխանատուն Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության անձնակազմի կառավարման աշխատանքներ իրականացնող ստորաբաժանումն է (այսուհետ՝ անձնակազմի կառավարման աշխատանքներ իրականացնող ստորաբաժանում), իսկ քաղաքացիական ծառայողների վերապատրաստման գործընթացը համակարգում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության պետը (այսուհետ՝ քրեակատարողական վարչության պետ) կամ նրա տեղակալը:

*4. (4-րդ կետն ուժը կորցրել է 19.12.11 N 216-Ն)*

5. Քաղաքացիական ծառայողին վերապատրաստման դասընթացներին ընդգրկելը ձևակերպվում է քրեակատարողական վարչության պետի հրամանով:

6. Վերապատրաստման ընթացքում քաղաքացիական ծառայողն ազատվում է ծառայողական պարտականությունների կատարումից՝ քաղաքացիական ծառայության իր զբաղեցրած պաշտոնի, ստաժի և վարձատրության պահպանմամբ:

7. Վերապատրաստման արդյունքում ստացված փաստաթղթի պատճենը կցվում է քաղաքացիական ծառայողի անձնական գործին:

8. Վերապատրաստողները քաղաքացիական ծառայողների յուրաքանչյուր վերապատրաստման դասընթացի ավարտից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, անձնակազմի կառավարման աշխատանքներ իրականացնող ստորաբաժանում են ներկայացնում տեղեկանք (Ձև 1)՝ վերապատրաստում անցած քաղաքացիական ծառայողների վերապատրաստման արդյունքների վերաբերյալ:

9. Անձնակազմի կառավարման աշխատանքներ իրականացնող ստորաբաժանումը, եռամսյակը մեկ անգամ, քրեակատարողական վարչության պետին է ներկայացնում ամփոփ տեղեկանք՝ վերապատրաստում անցած քաղաքացիական ծառայողների վերապատրաստման արդյունքների վերաբերյալ, որոնց հիման վրա տարեվերջին ներկայացնում է հաշվետվություն քաղաքացիական ծառայողների վերապատրաստման տարեկան արդյունքների մասին:

**II. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂԻ ՊԱՐՏԱԴԻՐ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ**

10. Քաղաքացիական ծառայողների պարտադիր վերապատրաստման գործընթացը կազմակերպելու համար կառուցվածքային ստորաբաժանումներում կազմվում են հաջորդ տարում վերապատրաստման ենթակա քաղաքացիական ծառայողների անվանական ցուցակները՝ համաձայնեցնելով նրանց ղեկավարների հետ:

11. Ցուցակների հիման վրա կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները մինչև ընթացիկ տարվա հոկտեմբերի 30-ը անձնակազմի կառավարման աշխատանքներ իրականացնող ստորաբաժանում են ներկայացնում վերապատրաստման ենթակա քաղաքացիական ծառայողների անվանական հայտերը:

**12. (12-րդ կետն ուժը կորցրել է 19.12.11 N 216-Ն)**

13. Քաղաքացիական ծառայողի պարտադիր վերապատրաստումը առնվազն պետք է ընդգրկի քաղաքացիական ծառայության, կառավարչական հմտությունների և համապատասխան ստորաբաժանումների ընդհանուր իրավասության (այսուհետ՝ մասնագիտական) և/կամ համապատասխան ստորաբաժանումների համանման գործառնություններին առնչվող (այսուհետ՝ ընդհանուր բնույթի) բնագավառների ծրագրեր:

14. Քրեակատարողական վարչության պետը մինչև ընթացիկ տարվա հունիսի 1-ը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի հաստատմանն է ներկայացնում հաջորդ տարվա վերապատրաստման ժամանակացույցը:

«Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենը մինչև ընթացիկ տարվա հունիսի 1-ը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի հաստատմանն է ներկայացնում քաղաքացիական ծառայողների հաջորդ տարվա վերապատրաստման դասախոսությունների և գործնական պարապմունքների ցանկերը՝ նշելով դրանց ընդհանուր ժամաքանակները:

Սույն կետով նախատեսված վերապատրաստման ժամանակացույցը ներկայացվում են ըստ քաղաքացիական ծառայության պաշտոնների խմբերի կամ մասնագիտությունների:

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը վերապատրաստման ծրագրերը հաստատում է վերապատրաստման ժամանակացույցի, դասախոսությունների և գործնական պարապմունքների ցանկերի ներկայացման օրվանից մեկամսյա ժամկետում:

**(14-րդ կետը խմբ. 19.12.11 N 216-Ն)**

14.1 Վերապատրաստման ծրագիրը պետք է առնվազն ներառի՝

1) դասախոսությունների և գործնական պարապմունքների ցանկը, ինչպես նաև դրանց ընդհանուր ժամաքանակը.

2) ժամանակացույցը, որը ներառում է խմբերի կազմերի (վերապատրաստվողի անունը, ազգանունը, հայրանունը, պաշտոնը՝ ներառյալ հիմնարկի անվանումը) և ըստ խմբերի անցկացման ժամանակահատվածների վերաբերյալ տեղեկատվություն:

Վերապատրաստման անցկացման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են տվյալ ուսումնական հաստատության գործունեությունը կանոնակարգող իրավական ակտով:

**(14.1 կետը լրաց. 19.12.11 N 216-Ն)**

15. Անձնակազմի կառավարման աշխատանքներ իրականացնող ստորաբաժանումը կազմակերպում է քաղաքացիական ծառայողների վերապատրաստման գործընթացը՝ վերապատրաստողին ներկայացնելով անվանական հայտ (Ձև 2):

16. Պարտադիր վերապատրաստման ծրագրերը իրականացվում են դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով:

17. Պարտադիր վերապատրաստման արդյունքում քաղաքացիական ծառայողին տրվում է վկայական (Ձև 3):

18. Պարտադիր վերապատրաստման դասընթացների ավելի, քան մեկ երրորդին քաղաքացիական ծառայողի անհարգելի բացակայության դեպքում նրան՝ սույն կարգի 17-րդ կետով նախատեսված վկայական չի տրվում: Սույն կետով նախատեսված դեպքում քաղաքացիական ծառայողին տրվում է տեղեկանք՝ ծրագրերի ունկնդրած ծավալի և բովանդակության մասին:

19. Պարտադիր վերապատրաստման դասընթացների կեսից ավելին քաղաքացիական ծառայողի հարգելի բացակայության դեպքում (հիվանդություն, գործուղում և այլն) նրան՝ անձնակազմի կառավարման աշխատանքներ իրականացնող ստորաբաժանման թույլտվությամբ հնարավորություն է տրվում մասնակցելու հաջորդ դասընթացներից որևէ մեկին:

### **III. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՄԲ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ**

20. «Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 51.15-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմքով քաղաքացիական ծառայողի վերապատրաստման դեպքում քրեակատարողական վարչության պետը դասընթացները սկսվելուց առնվազն երկու ամիս առաջ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի հաստատմանն է ներկայացնում վերապատրաստման ժամանակացույցը, որը ներառում է վերապատրաստվողի անունը, ազգանունը, հայրանունը, պաշտոնը՝ ներառյալ հիմնարկի անվանումը, և տվյալ վերապատրաստման ֆինանսավորման մասին տեղեկատվություն:

Սույն կետի առաջին պարբերությամբ նախատեսված վերապատրաստման դասախոսությունների ու գործնական պարապմունքների ցանկը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի հաստատմանն է ներկայացնում «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենը՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի համապատասխան ցուցումը ստանալուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

*(20-րդ կետը խմբ. 19.12.11 N 216-Ն)*

21. *(21-րդ կետն ուժը կորցրել է 19.12.11 N 216-Ն)*

22. *(22-րդ կետն ուժը կորցրել է 19.12.11 N 216-Ն)*

Հավելված թիվ 2  
Հայաստանի Հանրապետության  
արդարադատության նախարարի  
2010 թվականի սեպտեմբերի 9-ի  
N 186-Ն հրամանի

**Կ Ա Ր Գ**

### **ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ**

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական ծառայողների (այսուհետ՝ քաղաքացիական ծառայողներ) մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործման նպատակով քաղաքացիական ծառայողի գործուղման հետ կապված հարաբերությունները:

2. Մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործման նպատակով քաղաքացիական ծառայողի գործուղման դասընթացները չեն կարող պակաս լինել 60 ակադեմիական ժամից ժամկետով:

*(2-րդ կետը փոփ. 19.12.11 N 216-Ն)*



ներկայացվող

(վերապատրաստող)

(համապատասխան ստորաբաժանման անվանումը)  
քաղաքացիական ծառայողների վերապատրաստման արդյունքների մասին

N	Վերապատրաստման մասնակիցները (անուն, ազգանուն, հայրանուն, հեռախոս)	Զբաղեցրած պաշտոններն ըստ խմբերի	Ծրագրի անվանումը	Ժամկետները (սկիզբ-ավարտ)

-ից խմբի պատասխանատու անձ է

(համապատասխան ստորաբաժանման անվանումը)

նշանակված \_\_\_\_\_

(անուն, ազգանուն, պաշտոն, հեռախոսահամարներ)

Անձնակազմի կառավարման  
աշխատանքներ իրականացնող  
ստորաբաժանման ղեկավար \_\_\_\_\_

(անուն, ազգանուն)

Ձև 3



**ՎԿԱՅԱԿԱՆ N**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ  
ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ**

Տրվում է

\_\_\_\_\_

(պաշտոնը, անունը, հայրանունը, ազգանունը)

<b>Առ այն, որ նա վերապատրաստվել է</b>	
_____	
_____	
_____	
_____	
_____	
(վերապատրաստողը, վերապատրաստման ծրագիրը, վերապատրաստման ժամկետը)	
	_____ (վերապատրաստողը)

*(Ձևը լրաց 19.12.11 N 216-Ն)*